ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԻՄԱԽՈՍԻ

Աստղիկ Գևորգի Պողոսյանի Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Ֆինանսական վերահսկողության հիմնախնդիրները ՀՀ բուհերում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ֆինանսական վերահսկողությունը հանդիսանում է բուհերի կառավարման գործառույթների անբաժանելի, անհրաժեշտ ու կարևորագույն մասը: Կատարելով հասարակության համար չափազանց կարևոր գործառույթ և ձևավորելով որակյալ մարդկային կապիտալ՝ համալսարանների մեծ մասը, պետական աջակցությանը զուգահեռ, գործունեություն է ծավալում նաև առևտրային սկզբունքներով: Հետևաբար, ֆինանսական վերահսկողությունն իր առջև խնդիր է դնում ոչ միայն գնահատելու հանրային ֆինանսավորման նպատակային ծախսերը բուհերում, այլև դրանց արդյունավետ օգտագործման արդյունքների ներկայացումը բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների շահառուներին՝ պետությանը, համալսարանների վարչակազմին, ուսանողությանը, գործատուներին:

Երկար ժամանակ բուհերում վերահսկողության հիմնական գործառույթը բուհի ֆինանսական ռեսուրսների ժամանակին հավաքագրման ու ըստ նպատակայնության ծախսման մշտադիտարկումն էր՝ կանխարգելելու հնարավոր չարաշահումներն ու դրամական միջոցների անարդյունավետ օգտագործումը: Ներկայում, սակայն կարևորվում են նաև ֆինանսական վերահսկողության վերլուծական գործառույթները:

Ընդհանրապես, բուհերում մատուցվող ծառայությունների առանձնահատկություններով պայմանավորված՝ գործունեության արդյունավետության, նպատակայնության և այդ հիմքի վրա՝ ֆինանսական ծախսումների արդյունքայնության գնահատումը բավականին բարդ խնդիր է հանդիսանում: Մյուս կողմից՝ այն խիստ արդիական ու կարևոր է: Ըստ այդմ, գրախոսվող ատենախոսությունը նվիրված լինելով վերը նկարագրված խնդիրների վերհանմանն ու դրանց լուծմանը միտված առաջարկությունների ձևակերպմանը, ձեռք է բերում իրական արդիականություն և կարևորություն:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել ՀՀ բուհերի ֆինանսական վերահսկողության գործող մեխանիզմները՝ վերհանելով դրանց բարելավման ուղիները: Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել համալսարանների ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձը և ներկայացնել ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման հնարավորությունները,
- ✓ դրամական միջոցների փաստացի ձևավորման չափերի և դրանց առնչվող սահմանված նպատակադրումների իրագործելիության փաստացի արդյունքների համադրումներով մշակել ֆինանսական ռեսուրսների ձևավորման ներքին վերահսկողության գնահատման համակարգ,
- ✓ ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացը դիտարկել ֆինանսական վերահսկողության տեսանկյունից՝ առաջարկելով կրեդիտների շարժունության դրամային փոխակերպման համակարգ,
- ✓ մշակել ըստ պատասխանատվության կենտրոնների գիտակրթական գործունեության անբարենապաստ ֆինանսական շեղումների բացահայտման և կառավարչական հաշվառման տեղեկատվական համակարգ,
- ✓ անընդհատության սկզբունքով ներկայացնել ներբուհական ֆինանսական հաշվետվողականության կազմակերպում՝ նպատակ ունենալով կանխարգելելու բուհի ֆինանսական ռիսկերի ձևավորումը՝ ըստ գիտակրթական գործունեության պատասխանատվության կենտրոնների,
- ✓ մշակել ֆինանսական ներքին վերահսկողության որակի վարկանիշային գնահատման համակարգ և ներկայացնել բուհի ստորաբաժանումներում ֆինանսական վերահսկողության թույլ և ուժեղ կողմերի բացահայտման մեթոդաբանություն:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը շարադրված է 120 էջ ծավալով, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և

առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ֆինանսական համակարգի գործունեության առանձնահատկությունները համալսարաններում» գլխում ուսումնասիրվել են ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի զարգացման միտումները, հանրապետությունում մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձի ներդրման ուղիները, քննարկվել են ՀՀ բուհական համակարգում ֆինանսական վերահսկողության գործառույթների բարելավման հիմնախնդիրները:

Ատենախոսության երկրորդ՝ «Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերահսկողության շրջանակը բուհերում» գլխում դիտարկվել են ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերահսկողության հիմնախնդիրները, քննարկվել են բուհերում կրթավճարների ձևավորման ֆինանսական վերահսկողության մոտեցումները, նաև՝ ուսումնասիրվել են ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման ֆինանսական վերահսկողության հիմնախնդիրները:

Երրորդ գլուխը վերնագրված է «Ֆինանսական վերահսկողության կազմակերպման կատարելագործման ուղիները բուհերում»: Այստեղ հեղինակը քննարկում է բուհական համակարգում աուդիտի կազմակերպման հիմնախնդիրները, պատասխանատվության կենտրոններով ֆինանսական վերահսկողության կազմակերպումը, բուհերում ֆինանսական վերահսկողության հաշվետվողականության տեղեկատվական ապահովման հիմնախնդիրները, նաև՝ ֆինանսական ներքին վերահսկողության որակի վարկանիշային գնահատման մոտեցումները:

«Եզրակացություններ» բաժնում ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները:

Ատենախոսության արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Հետազոտության օբյեկտն է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսական համակարգն ու ֆինանսական վերահսկողության գործառույթների շրջանակը: Հետազոտության առարկան ՀՀ բուհերում իրականացվող ֆինանսական վերահսկողության գործընթացն է:

Ատենախոսությունը բարձրագույն մասնագիտական կրթության ծառայությունների ֆինանսական վերահսկողության մեթոդական մոտեցումների տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված հետազոտություն, որը ներառում է ՀՀ բուհական համակարգում ֆինանսական վերահսկողական նպատակադրումների և կազմակերպչական գործառույթների բարելավմանը միտված տեսական բնույթի առաջարկություններ:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, ներկայացված մոտեցումները և մեթոդները, հաջորդիվ լրամշակման պարագայում, կարող են կիրառություն գտնել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական համակարգում՝ նպաստելով բուհերում իրականացվող ֆինանսական գործառույթների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև համալսարանների ֆինանսական ռեսուրսների օգտագործման մշտադիտարկման բարելավմանն ու նրանց կողմից իրականացվող կառավարչական որոշումների ընդունման կատարելագործմանը:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Հետազոտության հիմնական արդյունքները հեղինակն առանձնացրել է գիտական նորույթի հավակնություններ ունեցող հետևյալ կետերում.

1. ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացը դիտարկելով ֆինանսական վերահսկողության կտրվածքով՝ առաջարկվել է կրեդիտների արժեքային փոխակերպման համակարգ՝ ուսանող/ակադեմիական կրեդիտի հենքով ներկայացնելով հաշվարկային դրամական ներհոսքեր և արտահոսքեր,
2. դրամական միջոցների ձևավորման և դրանց առնչվող սահմանված նպատակադրումների իրագործելիության փաստացի արդյունքների համադրումներով առաջարկվել է ֆինանսական ռեսուրսների օգտագործման վերահսկողության գործակցային շեղումների գնահատման համակարգ՝ ներքին վերահսկողության գործառույթների շրջանակում մշտադիտարկմանը զուգահեռ կիրառելով նաև վերլուծական գնահատումներ,
3. առաջարկվել է ըստ պատասխանատվության կենտրոնների գիտակրթական գործունեության անբարենպաստ դրամական շեղումների բացահայտման հաշվապահական հաշվառման տեղեկատվական համակարգ՝ հնարավորություն ստեղծելով բուհերում իրականացնելու ներկառավարչական հաշվետվողականության

կազմակերպում և, դրանով իսկ անընդհատության սկզբունքով կանխարգելելու ֆինանսական ռիսկերի ձևավորումը,

4. մշակվել է ֆինանսական ներքին վերահսկողության որակի վարկանիշային գնահատման համակարգ, որով բուհի առանձին ստորաբաժանումներում իրականացվող ֆինանսական վերահսկողության արդյունավետությունը դիտարկվում է կազմակերպչական տեսանկյունից՝ շեշտադրելով վերահսկողական կանխարգելիչ, կարգավորիչ և վերլուծական գործառույթները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության էջ 18-ում, որպես ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի զարգացման միտումների վերլուծության արդյունք, հեղինակն ամրագրում է, որ առկա է բուհերում պատրաստվող մասնագետների առաջարկի և աշխատաշուկայում դրա պահանջարկի անհամապատասխանություն՝ դրանով իսկ նպաստելով բարձրագույն կրթությամբ անձանց գործազրկության աճին: Հարկ է նկատել, որ սույն դատողությունը հիմնված չէ աշխատաշուկայում աշխատուժի նկատմամբ պահանջարկի և գործազրկության մակարդակի հեղինակային վերլուծություններով:
2. Էջ 23-ում հեղինակն ուշադրություն է հրավիրում այն իրողությանը, որ վերջին տարիներին պետական բուհերը հայտնվում են խոշոր հազար հարկատուների ցանկում, ինչը, նաև՝ հղում անելով մասնագիտական գրականությանը, ներկայացվում է որպես անարդյունավետ ֆինանսական կառավարման երևույթ: Հարկ է, սակայն, նկատել, որ 1000 խոշոր հարկատուների ցանկում տեղ զբաղեցնելը որևէ արտառոց երևույթ համարելը դժվար է, դրա համար բավարար է նույնիսկ 250 մլն դրամի չափով հարկի վճարումը, իսկ, օրինակ, ցանկի առաջին հարյուրյակում 2021թ□ արդյունքներով հայտնվել է ընդամենը մեկ պետական բուհ: Ավելին, դիտարկվող ցանկում հայտնված պետական բուհերի հարկային վճարումների կառուցվածքում 75-80 տոկոսը կազմում են եկամտային հարկի վճարումները, և հաշվի առնելով այն, որ պետական բուհերը նաև խոշոր գործատուներ են, որտեղ զբաղված են մի քանի հարյուր աշխատակիցներ, արտառոց երևույթ չպետք է համարել այնպիսի ծավալով եկամտային հարկի վճարումը, որը թույլ է տալիս հայտնվել խոշոր հարկատուների ցանկում:
3. Էջ 26-ում հեղինակն արտահայտում է այն միտքն, ըստ որի «Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ համալսարաններում իրականացվող գիտահետազոտական արդյունքները հիմնականում մնում են թղթի վրա և չեն վաճառահանվում, քանի որ խզված

են տնտեսության ոլորտից...»: Քանի որ նշվածը բավականաչափ լուրջ խնդրի մասին է, ցանկալի կլիներ ավելի հստակ նշել, թե ի՞նչ ուսումնասիրություններին է հղում անում հեղինակը:

4. Էջ 44-ում, ամփոփելով նախորդ հատվածում արված վերլուծության արդյունքները, հեղինակը ՀՀ բուհական համակարգում ֆինանսական վերահսկողության գործառույթների բարելավման ուղղությունների շարքում նշում է ռեսուրսների ծախսերի սպասելի հատույցների գնահատումով ֆինանսական վերահսկողության կազմակերպման անհրաժեշտությունը, որի համար պետք է կատարել ֆինանսական ռեսուրսների ծախսային ծրագրային բյուջետավորում: Չվիճարկելով նշվածի կարևորությունը, այնուհանդերձ հարկ ենք համարում ընդգծել, որ ատենախոսությունում բացակայում է հիշյալ դրույթի կենսագործման առանցքային խոչընդոտներից մեկի՝ կրթական հաստատությունում ռեսուրսների ծախսման վերջնարդյունքի և արդյունավետության համարժեք գնահատման խնդրի լուծմանն առնչվող որևէ գործնական մոտեցում, ավելին՝ որևէ կերպ չի հիշատակվում այս խնդրի գոյությունն ինքնին:
5. Աղյուսակներ 2.1.2 և 2.1.3-ում ներկայացված է մեթոդական մոտեցում, որն ըստ էության բուհի ֆինանսական ռեսուրսների ձևավորման և օգտագործման գործակցային շեղումների պարզ միջինացման, վերջում՝ դրանց համեմատության ընթացակարգ է: Չվիճարկելով ներկայացվածի տրամաբանության հիմնավորվածությունը, կարծում ենք մեթոդական մոտեցման կիրառականության օգտին կարևոր փաստարկ կլիներ ՀՀ որևէ բուհի օրինակով դրա գործադրումը, նաև՝ այդ ընթացքում ի հայտ եկող խնդիրների, խոչընդոտների ուսումնասիրությունը:
6. Ատենախոսության էջ 65-ում ամփոփված են ըստ դիմորդի ֆինանսական սպասումների կրթավճարների հիմնավորման հեղինակի կողմից առաջարկվող մոտեցման շրջանակներում ընձեռվող հնարավորությունները: Հարկ ենք համարում նկատել, որ ներկայացվածը ընդգծված տեսական բնույթ է կրում, կոնկրետ բուհերի պարագայում դրա կիրառման հնարավորությունները խիստ սահմանափակ են և խնդրահարույց:
7. Աշխատանքում հեղինակի կողմից առաջադրված խնդիրների լուծումները, ընդգրկելով բուհերի ֆինանսական կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացման կարևոր ասպեկտներ, միաժամանակ բավարար չափով հաշվի չեն առնում մասնագիտական կրթության առանձնահատկություններով պայմանավորված կիրառման խոչընդոտները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության շրջանակներում հեղինակի կողմից արծարծվել և ուսումնասիրվել են բուհական համակարգում ֆինանսական վերահսկողության համար կարևորություն ունեցող խնդիրներ, դիտարկվել են լուծումներ, որոնք առավելապես տեսական-մեթոդական բնույթ են կրում և կարող են հիմք հանդիսանալ ոլորտում նոր հետազոտական աշխատանքների համար:

Արձանագրելով հեղինակի կողմից կատարված զգալի ծավալով աշխատանքը, առաջադրված խնդիրների լուծման ուղղությամբ արված առաջարկների տրամաբանվածությունը, ընդունելով հետազոտվող հիմնահարցերի՝ ի սկզբանե բարդ և դժվար լուծելի լինելու հանգամանքը՝ հույս ենք հայտնում, որ դիտարկվող խնդիրների լուծման առումով հեղինակային մշակումների, դիտարկումների շրջանակն ավելի խորն է ու կոնկրետ, քան արտացոլված է ատենախոսությունում, նաև՝ հավատում ենք, որ հեղինակի մասնագիտական պատրաստվածության ու կարողությունների մակարդակը բավարար են ատենախոսությունում տեղ գտած թերությունների ու բացթողումների վերաբերյալ պատշաճ դիտարկումներ ու մեկնաբանություններ ներկայացնելու համար:

Ընդհանուր առմամբ, նկատի ունենալով մեր կողմից վերհանված թերությունները, նաև՝ ներկայացված հետազոտության ընդհանուր բովանդակությունը, դրանում ամրագրված հիմնական դրույթները, հաշվի առնելով նախորդ քննարկման արդյունքները, կարծում ենք, որ գրախոսվող ատենախոսությունը ընդհանուր գծերով համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակին կարող է շնորհվել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան՝ Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Մ.Քթոյան**

Ա.Մ. Քթոյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ՀՊՏՀ գիտական քարտուղար **Ն.Հ.Դարբինյան**

05.12.2022թ.